ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը՝ նշելով, որ արտահերթ նիստի հրավիրման անհրաժեշտությունը պայմանավորված էր օրակարգում ընդգրկված հարցերի հրատապությամբ:Դրանից հետո համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը:

Նիստին ներկա էին ավագանու 17 /տասնյոթ/ անդամներ, բացակայում էին ավագանու 10/տաս/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 17/տասնյոթ/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Տիգրան Բաղդասարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը,Մանուկ Գևորգյան, Աստղիկ Պետրոսյանը, Արթուր Աստոյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Լիլիթ Հաջաթյանը, Գայանե Մինասյանը, Հովհաննես Սահակյանը, Արտակ Ռափյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը, Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, ֆինանսատնտեսագիտական, մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին: /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2022 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին: /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2022թվականի /ամենամյա/ ծրագիրը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022թվականի հունիսի 7-ի թիվ 97-Ն որոշման հավելվածում լրացում կատարելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ՝

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Էմմա Յայլոյանը: Նա ներկայացրեց համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու պատճառները և դրանց հիմնավորումները: Տվյալ օրակարգի հարցի վերաբերյալ հարցեր ուղղեցին ավագանու անդամներ Ա.Ռափյանը,Ա,Աստոյանը,Ս.Տոնոյանը,որոնց պատասխանեց հարցը ներկայացնող Էմմա Յայլոյանը:Ավագանու անդամ Ա. Տոնոյանը առաջարկեց արտահերթ նիստերի կազմակերպման ժամանակ բոլոր հավելվածների

քաղվածքները նախապես ուղարկել ավագանու անդամների էլեկտրոնային հասցեներին: Այլ առաջարկություններ չեղան, նշված օրակարգի հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 17, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ		
Բաղդասարյան Տիգրան		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Գևորգյան Մանուկ		
Պետրոսյան Աստղիկ		
Աստոյան Արթուր		
Հարությունյան Արտակ		
Տոնոյան Արման		
Վարդանյան Նարինա		
Սահակյան Հովհաննես		
Հաջաթյան Լիլիթ		
Մինասյան Գայանե		
Ռափյան Արտակ		
Մկրտչյան Մուշեղ		
Վարագյան Մեսրոպ		
Ասատրյան Ժաննա		

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդում, որի մանրամասնությունները ներկայացրեց Էմմա Յայլոյանը: Ավագանու անդամ Մ.Վարագյանի հարցին, թե ինչով է պայմանավորված տարբեր համայնքների սեփական եկամուտների կատարման մեծ տարբերությունը, պատասխանեց Ա. Սուքիասյանը, նշելով, որ դա պայմանավորված է տարբեր համայքների աշխատողների ոչ բավարար աշխատանքով, որի համար որոշ վարչական ղեկավարներ նկատողություններ են ստացել: Քննարկումից հետո հարցը հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 17, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց Արթիկ համայնքի աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը՝ Արթիկ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին: Նա նշեց, որ տվյալ հարցով կազմակերպվել է հանրային քննարկում, որին մասնակցել են ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, որոնց հետ մանրամասն քննարկվել են բոլոր համայնքների հրատապ խնդիրները, առաջնահերթությունները , որոնք մտցվել են հնգամյա զարգացման ծրագրերի մեջ: Ավագանու անդամներ Մ.Մկրտչյանին և Մ.Վարագյանին հետաքրքրում էր, թե բոլոր գյուղերի խնդիրները մտցվել են հնգամյա զարգացման ծրագրերի մեջ, ինչին Ա.Սուքիասյանը պատասխանեց, որ այս բոլոր գյուղերի խնդիրները մտցվել են, իսկ առավել մեծ ուշադրություն դարձվել է Արթիկ քաղաքի զարգացման հարցերին, քաղաքային միջավայրի զարգացմանը: Ավագանու անդամ Ա.Ռափյանի այն հարցին, թե երբ է աղբահանությունը իրականացվելու համայնքի կողմից, Ա.Սուքիասյանը պատասխանեց, որ սպասում են նոր տեխնիկական միջոցների ստացմանը, որ կարողանան ինքնուրույն իրականացնել աղբահանությունը:

Ավագանու անդամ Մ.Վարագյանի այն հարցին, թե հետագայում ծրագրերի մեջ լրացումներ, փոփոխություններ լինելու են, Ա.Սուքիասյանը պատասխանեց, որ հնգամյա զարգացման ծրագիրը քարացած փաստաթուղթ չէ, այն հետագա տարիներին պետք է մշտապես լրացվի, նորացվի: Ավագանու անդամ Ա.Աստոյանը նշեց, որ իր սպասելիքները հնգամյա զարգացման ծրագրերի հետ կապված ավելին էին, ուստի ինքը այս հարցին ձեռնպահ կքվեարկի: Քննարկումից հետո հարցը հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 1 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

Ոսկանյան Անանիկ

Աստոյան Արթուր

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի առաջատար մասնագետ Ամալյա Մովսիսյանը՝ նշելով, որ սոցիալապես անապահով ընտանիքներից ստացվում բազմաթիվ դիմումներ օգնություն տրամադրելու խնդրանքով: Ստացված դիմումները ուսումնասիրվում են տունայցելությունների միջոցով, գումարները սահմանվում են կառավարության կողմից հաստատված բալային համակարգով, կարիքների գնահատման հիման վրա: Ա.Մովսիսյանը ներկայացրեց սոցիալապես անապահով 30 ընտանիքների

կարիքավորության աստիճանից: Ավագանու անդամ Մ.Գևորգյանը գտնում է, որ գների թանկացման պայմաններում հատկացված գումարները քիչ են, որը պետք է ավելացվի, իսկ ավագանու անդամ Ա.Տոնոյանն էլ առաջարկում է ավելի շատ գումարներ հատկացնել Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի ընտանիքներին և մասնակիցներին: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան Անանիկ		
Բաղդասարյան Տիգրան		
Գևորգյան Էմիլ		
Հովհաննիսյան Վարդուհի		
Գևորգյան Մանուկ		
Պետրոսյան Աստղիկ		
Աստոյան Արթուր		
Հարությունյան Արտակ		
Տոնոյան Արման		
Վարդանյան Նարինա		
Սահակյան Հովհաննես		
Հաջաթյան Լիլիթ		
Մինասյան Գայանե		
Ռափյան Արտակ		
Մկրտչյան Մուշեղ		
Վարագյան Մեսրոպ		
Ասատրյան Ժաննա		

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Աշոտ Պասկևիչյանը՝ Արթիկ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2022թվականի հաշվետվության /հողային հաշվեկշռի/ մասին: Ավագանու անդամներ Մ.Վարագյանը և Ա.Ռափյանը առաջարկեցին առաջիկայում նմանատիպ հարցեր լինելու դեպքում հավելվածները և տվյալները ավագանու անդամներին նախապես տրամադրել էլեկտրոնային եղանակով: Այլ հարցեր, առաջարկներ չեղան և օրակարգի հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 6-րդ հարցը նույնպես ներկայացրեց Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Աշոտ Պասկևիչյանը՝ Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2022թվականի /ամենամյա/ ծրագիրը հաստատելու մասին: Հարցը ներկայացնողը ներկայացրեց ծրագրի դրույթները, միաժամանակ նշելով , որ որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, միաժամանակ համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: Այլ հարցեր,առաջարկներ չեղան և օրակարգի հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց Արթիկ համայնքի ավագանու <<Ապրելու երկիր>> խմբակցության անդամ Ա.Աստոյանը: Նա իրենց խմբակցության կողմից հանդես է եկել նախաձեռնությամբ , որով առաջարկում է Հայաստանի հանրապետության զինված ուժերում զինված զինծառայության զորակոչված, զինծառայողներին ճանապարհելու նպատակով կազմակերպվող միջոցառումների համար բնակավայրերում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահները տրամադրել անհատույց:

Նշված նախաձեռնության դեմ արտահայտվեցին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը, նշելով, որ ճիշտ է նախաձեռնությունը շատ կարևոր է, սակայն ավագանու նախկին նիստում այդ հարցի լուծման համար արդեն իսկ որոշում է կայացվել, ընդամենը բնակիչները այդ նպատակով պետք է գրավոր դիմում ներկայացնեն համայնքի ղեկավարի անունով, մնացածը ընթացակարգով լուծվող խնդիր է:Հարցի քննարկմանը մասնակցեցին նաև ավագանու անդամներ Մ.Վարագյանը,

Ա.Աստոյանը չմասնակցեց քվեարկությանը:Հարցը չընդունվեց՝ 16 դեմ, 0 կողմ, 0 ձեռնպահ ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (0)	**Դեմ (16)**	**Ձեռնպահ (0)**
	Ոսկանյան Անանիկ	
	Բաղդասարյան Տիգրան	
	Գևորգյան Էմիլ	
	Հովհաննիսյան Վարդուհի	
	Գևորգյան Մանուկ	
	Պետրոսյան Աստղիկ	
	Աստոյան Արթուր	
	Հարությունյան Արտակ	
	Տոնոյան Արման	
	Վարդանյան Նարինա	
	Սահակյան Հովհաննես	
	Հաջաթյան Լիլիթ	
	Մինասյան Գայանե	
	Ռափյան Արտակ	
	Մկրտչյան Մուշեղ	
	Վարագյան Մեսրոպ	
	Ասատրյան Ժաննա	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք
19 օգոստոսի 2022թվականի